ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/63

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Կամուրջշին» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Կամուրջշին» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3195-2021 գրությամբ «Կամուրջշին» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից կամ Ընկերություն) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 25.02.2021թ.-ի թիվ 01/61-4011 գրության հիման վրա, 04.03.2021թ.-ին «Կամուրջշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

05.03.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/63 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

12.03.2021թ.-ին և 19.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.03.2021թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 25.02.2021թ.-ի թիվ 01/61-4011 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Կամուրջշին» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերոնշված ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Կամուրջշին» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Օրենքով սահմանված կարգով Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումները (բանկային երաշխիքի տեսքով):

Ներկայացված բանկային երաշխիքների վերջնաժամկետը չի համապատասխանել հրավերի պահանջներին՝ /ապահովումները պետք է վավեր լինեն 90-րդ աշխատանքային օրը/ և ներկայացված պայմանագիրը և բանկային երաշխիքները հետ են վերադարձվել ուղղման:

ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ներկայացված բանկային երաշխիքների ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կամուրջշին» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կամուրջշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կամուրջշին» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3195-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

15.03.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/63 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև Պատվիրատու) պահանջի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերությանը (այսուհետ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Պատվիրատուն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գրությամբ մատնանշել է հետևյալ փաստական հանգամանքը՝ Մասնակիցը թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված բանկային երաշխիքների վերջնաժամկետը չի համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ բանկային երաշխիքների ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ:

Գտնում եմ, որ սույն Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

1. Արդյո՞ք Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են բանկային երաշխիքները, թե՞ ոչ.

2. Արդյո՞ք գործող օրենսդրությամբ նախատեսված է բանկային երաշխիքներում առկա սխալը ուղղելու ժամկետներ և եթե այո ապա ինչ ժամկետներ, իսկ եթե ոչ ապա ինչ ժամկետներ են գործում: Արդյո՞ք մասնակցն պայմանագիր կնքելու իրավասությունից զրկելու օրենսդրական հնարավորություն նախատեսված է սահմանված ժամկետում ներկայացված բանկային երաշխիքներում առկա սխալը չուղղելու համար.

3. Արդյո՞ք պայմանագիր կնքելու իրավասությունից զրկելու որոշման կայացման պահին առկա է եղել հրավերի պահանջներին համապատասխան բանկային երաշխիքներ, թե՞ ոչ: Ե՞րբ է իհայտ եկել մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության չկատարման հիմքերը:

Անդրադառնալով պարզաբանման ենթակա 1-ին հարցադրմանը հայտնեմ հետևյալը, որ Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը իր կարիքների համար 25.11.2020 թվականին հրապարակել է Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների

ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» բաց մրցույթի հրավերը (այսուհետ նաև գնման ընթացակարգ): Գնման ընթացակարգի շրջանակում հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ Մասնակիցը: Պատվիրատուի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու վերաբերյալ թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի շրջանակում 19.01.2021 թվականին կազմվել է թիվ 3 արձանագրությունը: Պատվիրատուի կողմից 01.02.2021 թվականին «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերությանն է ուղարկվել պայմանագրի նախագիծը, որը մասնակցի կողմից ստորագրվել և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 11.02.2021 թվականին տրված թիվ 754-02 և թիվ 755-02 բանկային երաշխիքի հետ միասին 12.02.2021 թվականին տրվել է Պատվիրատուին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը և բանկային երաշխիքները ներկայացնելու առաջարկը մասնակցին է ուղարկվել 01.02.2021 թվականին, ուստի պետք է փաստել, որ դրանք 12.02.2021 թվականին Պատվիրատուին ներկայացնելով մասնակիցը կատարել է իր պարտավորությունները սահմանված ժամկետում, քանզի այն լրանում էր՝15.02.2021 թվականին: Ուստի պատասխանելով հարցադրմանը պետք է փաստել, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են բանկային երաշխիքները:

Անդրադառնալով պարզաբանման ենթակա 2-րդ հարցադրմանը, նշեմ հետևյալը. Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից պետք է եզրակացնել հետևյալը, որ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը դա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը ապահովելու համար երաշխիք է, որով պայմանավորված երաշխավորվում են Պատվիրատուի իրավունքները: Օրենսդիրը

սահմանել է նաև Պատվիրատուի համար պարտավորություն պայմանագրի նախագիծը կազմելու և այն կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ, իսկ Մասնակցի համար այն ստանալուց հետո կնքելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու պարտավորություն: Այսինքն պետք է փաստել, որ սույն դեպքում կիրառելի են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված կարգավորումները: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

2. Պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

Նույն օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

Վերոգրյալի համապարփակ վերլուծության արդյունքում պետք է փաստել այն, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից հայտ ներկայացնելը և պատվիրատուի կողմից այն բավարար գնահատելն ու մասնակցին հաղթող ճանաչելը վկայում են կնքման ենթակա պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունը ձեռք բերելու մասին, իսկ պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը մասնակցին ուղարկելը նշանակում է օֆերտան ուղարկված, որի ակցեպտավորման հիմքով անթույլատրելի է դրա հետկանչելիությունը: Նշվածը դիտարկելով Գնման ընթացակարգի համատեքստում պետք է փաստել, որ մասնակցի կողմից պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելուց հետո օֆերտան համարվում է ակցեպտավորված:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցի՝ «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲ ընկերության կողմից հայտ ներկայացնելով, այդ թվում նաև գնային առաջարկ, իսկ Պատվիրատուի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու արդյունքում պետք է փաստել, որ պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնությունները ձեռք են բերվել: Ուստի մասնակցի կողմից պայմանագրի նախագիծը

կնքելու և պայմանագրի ապահովումը ներկայացնելու պարտավորությունը կատարելով պայմանավորված կողմերը փաստել են պայմանագրի կնքումը:

Ինչ վերաբերվում է պայմանագրի կնքման հետ միաժամանակ պայմանագրի ապահովում ներկայացնելուն, ապա պետք է արձանագրել, որ Գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջից 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցը պարտավոր է ներկայացնել այն, և մասնակիցը կարող է զրկվել պայմանագրի կնքման իրավունքից այդ ժամկետում պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում: Իսկ բանկային երաշխիքները սահմանված ժամկետում չուղղելու համար գործող օրենսդրությամբ նախատեսված չէ պայմանագրի կնքման իրավունքից զրկելու օրենսդրականա հնարավորություն:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է կարևորել նաև հետևյալը, որ մասնակիցը պայմանագիրը կնքել և բանկային երաշխիքները ներկայացրել է սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում, ուստի գործող օրենսդրական կարգավորմամբ մասնակիցը կատարել է իր պարտավորությունները: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ մասնակցի կողմից 12.02.2021թ. ներկայացված բանկային երաշխիքները ենթակա էր շտկման, ապա հայտնեմ, պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղումը չի կարգավորվում գործող օրենսդրությամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերը իրականացրել են բանակցություններ բոլոր էական պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերված պայմանագրի կնքման շրջանակում՝ բանկային երաշխիքներում առկա սխալի ուղղման վերաբերյալ, ապա այդ սխալի համար օրենքով ժամկետներ սահմանված չլինելու պարագայում գտնում եմ, որ այն մասնակից համար չի կարող առաջացնել իրավական հետևանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես պայմանագրի ապահովում ներկայացվող բանկային երաշխիքում առկա սխալի ուղղում կատարելու համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չեն ժամկետներ, ինչպես նաև Պատվիրատուի 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրությամբ ներկայացված սխալի ուղղում կատարելու պահանջով նույնպես ժամկետներ չեն սահմանվել, ուստի խնդիրը ենթակա է

կարգավորման գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան: Մասնավորապես ՀՀ գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջից 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցը պարտավոր է ներկայացնել այն, այսինքն որպես համանման կանոն այս դրույթը կիրառելու դեպքում պետք է արձանագրել, որ պայմանագրի ապահովման մեջ սխալի ուղղում կատարելու պահանջի դեպքում կիրառելի է նույն ժամկետները՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի դրույթները, և երկրորդ, քանզի գործող օրենսդրությամբ նախատեսված չէ պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղման համար տրվող ժամկետներ, ապա կիրառելի է նաև գործարար շրջանառության սովորույթները, որի համաձայն ինչպես պայմանագրի շրջանակում, այնպես էլ մինչև պայմանագրի կնքումը ծագած խնդիրներն ու վեճերը նախապես լուծվում են արտադատական եղանակով՝ բանակցությունների միջոցով, և սույն դեպքում Երևանի քաղաքապետարանը իր 12.02.2021 թվականի թիվ 61/18 գրությամբ սկիզբ է դրել ներկայացված բանկային երաշխիքների մեջ առկա սխալի ուղղման վերաբերյալ բանակցությունների իրականացմանը, որը ողջամիտ ժամկետում՝ հենց հաջորդ աշխատանքային օրը մասնակցի կողմից ներկայացվել է բանկ ուղղման նպատակով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքների վերաբերյալ սխալը ուղղելու պահանջի մասին գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը կազմել է 12.02.2021 թվականին ժամը 15:00-ին և որից հետո նոր միայն ծանուցվել է մասնակցին: Գրեթե բանկային օրվա ավարտին կատարված ծանուցմանը արագ արձագանքելով հաջորդ իսկ աշխատանքային օրը մասնակիցը դիմել է սխալի ուղղման համար և բանկի կողմից 04.03.2021 թվականին կայացվել է դրական որոշում և բանկային երաշխիքում փոփոխություն կատարելու փաստաթուղթը տրամադրվել է Պատվիրատուին այն ստանալու օրը՝ 19.02.2021 թվականին, այսինքն մասնակիցը դրսևորելով բարեխիղճ վարքագիծ ողջամիտ ժամկետներում կատարել է իրեն ուղղված պահանջը: Իդեպ ողջամիտ ժամկետի սահմանմանը օրենսդիրը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի այն պարտավորության կատարումը, որը կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, որպես ողջամիտ ժամկետ նախատեսվում է պահանջը ներկայացնելուց հետո յոթօրյա ժամկետը: Սույն դեպքում պայմանագրի ապահովման մեջ առկա սխալի ուղղման պահանջի կատարման ժամկետ օրենքով նախատեսված չլինելու պարագայում, կիրառելի է յոթօրյա ժամկետը, որը 12.02.2021

թվականի պահանջի ներկայացումից հետո պահպանվել է և կատարվել 19.02.2021 թվականին:

Վերոգրյալը պետք է քննարկել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի համատեքստում, որով սահմանվում է գործարար շրջանառության սովորույթների հասկացությունը, ըստ որի գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է այնպիսի դրույթ, որի համաձայն օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին հակասող գործարար շրջանառության սովորույթները չեն կիրառվում:

Այսինքն վերոգրյալի կիրառման պարագայում պարզաբանման է ենթակա այն հարցադրումը, թե՞ արդյոք համանման կանոնների կամ գործարար շրջանառության սովորույթի կիրառումը կհակասի օրենսդրության պարտադիր դրույթներին, թե՞ ոչ:

Սույն դեպքում պարտադիր դրույթ ասելով պետք է բացահայտել պայմանագրի ապահովման էությունը, օրենսդրի կամքն ու նպատակը և այն խնդրի կարգավորումը, որին ուղղված է պայմանագրի ապահովման ներկայացնելը: Նշվածը իր հերթին պետք է համադրել մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի ապահովման մեջ առկա սխալին և բացահայտել այդ սխալը ուղղելու ժամանակահատվածում օրենսդրության պարտադիր դրույթների խախտման կամ չխախտման փաստը, որով պայմանավորված հնարավոր կլինի փաստել օրենքի անալոգիայի կամ գործարար շրջանառության սովորույթների կիրառման իրավաչափությունը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով սպանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Այսինքն նշված իրավական նորմի մեկնաբանությունից պետք է փաստել, որ պայմանագրի ապահովումը, որպես պարտավորությունների կատարումը ապահովող միջոց, ինքնին պայմանագրի կատարման երաշխիք, որի բացակայությունը կարող է ռիսկի տակ դնել պատվիրատուի իրավունքների իրականացումը, և եթե Պատվիրատուի կողմից առկա պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ, որոշակի ժամկետով, ապա այդ ողջ ժամանակահատվածը համարվում է ռիսկային և ենթակա է ապահովման լրացուցիչ երաշխիքով: Սույն դեպքում օրենսդրությամբ սահմանված պարտադիր պայմանը

պայմանագրի կնքման պահից սկսած և Պատվիրատուի պահանջով նախատեսված վերջնաժամկետի ընթացքում երաշխիքի ապահովումն է:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 11.02.2021 թվականին տրված թիվ 754-02 և թիվ 755-02 բանկային երաշխիքները ուժի մեջ է մտնում պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 11.03.2022 թվականը, որին ի լրումն տրված 19.02.2021 թվականի թիվ 1000-02 և թիվ 1001-02 ուղղմամբ բանկային երաշխիքների ժամկետների ավարտը փոփոխվել է 11.03.2022 թվականի փոխարեն 31.05.2022 թվականը, այսինքն ըստ էության Պատվիրատուի պահանջով առկա պայմանագրի ապահովումը երաշխավորված է այն ամբողջ ժամանակահատվածի համար, որը պահանջել է Պատվիրատուն, և պայմանագրի ապահովման մեջ սխալի ուղղումը չի հանգեցրել այնպիսի իրավիճակի, որ գեթ մեկ օր բանկային երաշխիքով ապահովված չլինի պայմանագրի կատարումը:

Եվ պատասխանելով պարզաբանման ենթակա 2-րդ հարցադրմանը պետք է փաստել հետևյալը, որ գործող օրենսդրությամբ նախատեսված չէ բանկային երաշխիքներում առկա սխալը ուղղելու ժամկետներ և սույն դեպքում Պատվիրատուն չի նշել, թե՞ ինչ ժամկետներում պետք է դրանք ուղղվեն, ուստի պետք է փաստել, որ դրանք ենթակա են ուղղման ողջամիտ ժամկետում և ուղղվել են 7 օրյա ժամկետում, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն համարվում է ողջամիտ, եթե ծանուցմամբ նշված չեն ժամկետներ, ինչպես նաև սույն՝ սխալի ուղղման, դեպքում հնարավոր է կիրառել բանկային երաշխիքի ներկայացման համար համանման 10 աշխատանքային օրվա կանոնը: Ինչպես նաև բանկային երաշխիքներում առկա սխալը չուղղելու համար մասնակցն պայմանագիր կնքելու իրավասությունից զրկելու օրենսդրական հնարավորություն նախատեսված չէ և տրամաբանական էլ չէր լինի, քանզի այն ուղղելու համար նույնիսկ ժամկետ սահմանված չէ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի պետք է արձանագրել հետևյալը, որ մասնակիցը հրավերով ստանձնած պարտավորությունը կատարել է օրենքով սահմանված կարգով, այսինքն 01.02.2021 թվականին ստանալով պայմանագիրը կնքելու և բանկային երաշխիքները ներկայացնելու առաջարկ, սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ 12.02.2021 թվականին ներկայացրել է դրանք, իսկ 12.02.2021 թվականի Պատվիրատուի պահանջով բանկային երաշխիքներում առկա սխալը ուղղելու ոչ օրենսդրական պահանջներ են առկա և ոչ էլ պատվիրատուն է ներկայացրել, ուստի 7 օրյա ժամկետում կատարված սխալի ուղղումը իրավաչափ է և չի կարող վկայել ստանձնած պարտավորության չկատարման մասին:

Անդրադառնալով պարզաբանման ենթակա 3-րդ հարցադրմանը, նշեմ հետևյալը, որ Երևանի քաղաքապետարանը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության է դիմել 25.02.2021 թվականին, ըստ էության փաստելով, որ մասնակցի կողմից հրավերով նախատեսված պահանջների չկատարման հիմքերը ծագել են 19.02.2021 թվականին և դրանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլ 04.03.2021 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը

նախաձեռնել է համապատասխան ընթացակարգ: Այսինքն թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.02.2021 թվականին ընդունված թիվ 5 արձանագրության պահին առկա է եղել 12.02.2021 թվականին՝ այսինքն օրենքով սահմանված ժամկետում, ներկայացված 11.02.2021 թվականին տրված թիվ 754-02 և թիվ 755-02 բանկային երաշխիքները, որոնք իրենց անբաժանելի մաս հանդիսացող փաստաթղթերով համապատասխանում են հրավերի պահանջներին: Նշվածից հետևում է, որ Պատվիրատուն հրավերով նախատեսված պարտավորության կատարման վերջնաժամկետ է դիտարկել հենց իր՝ 12.02.2021 թվականի ծանուցումից հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված 7 օրյա ժամկետը և դրա լրանալու օրով պայմանավորված՝ 19.02.2021 թվականին փաստել է Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքերի հիայտ գալը: Ուստի մասնակից գործողությունները իրավաչափ են:

Իսկ եթե կրկին ենթադրությամբ (քանզի Պատվիրատուն ոչրէ փաստաթղթով և նաև գնման ընթացակարգի և սույն ընթացակարգի շրջանակում չի մատնանշում թե՞ որն է սխալի ուղղման վերջնաժամկետը) դիտարկենք, այն հանգամանքը, որ սխալի ուղղման վերջնաժամկետը 15.02.2021 թվականն է (01.02.2021 թվականից հետո 10 աշխատանքային օր) ապա պետք է փաստել, որ մասնակից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնվել է օրենսդրական կարգի խախտմամբ, քանզի չի պահպանվել 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության դիմեու օրենսդրական պահանջը: Նշվածի վերաբերյալ բողոքներ քննող անձը իր իրավական դիրքորոշումն է հայտնել նաև 12.02.2021 թվականի թիվ ՍՑ-ԼՕ-2021/15 որոշմամն, ուստի միասնական պրակտիկա ապահովելու տեսնակյունով սույն դեպքում նույնպես կիրառելի են նույն կանոնները:»:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Կամուրջշին» ՓԲ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ճունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-ԼՕ-2021/63 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կամուրջշին» ՓԲԸ-ն:

iv. «Կամուրջշին» ՓԲԸ-ն թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ՝ կից ներկայացնելով Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն թիվ 1.1 հավելվածի:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Կամուրջշին» ՓԲԸ-ն:

vi. 19.01.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ին Ընկերությանը ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Կամուրջշին» ՓԲԸ-ն: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ ներկայացվում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3»» կնքվելիք պայմանագրի նախագիծը, որը կարող է կնքվել հրավերով սահմանված ձևով պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում, ինչպես նաև պայմանագրի գնի հարյուր տոկոսի չափով որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում: Պայմանագրի և որակի ապահովումները

ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Պայմանագրի որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին: Պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

viii. Նույն գրությամբ Մասնակիցը տեղեկացվել է, որ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան պետք է ներկայացվի վերջինիս կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և վերը նշված ապահովումները, ինչպես նաև armeps.am տիրույթում անհրաժեշտ է ընդունել պայմանագրի շնորհումը, նշված ժամկետում չներկայացնելու դեպքում Մասնակիցը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

ix. Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ընդունել է ի գիտություն, որ «Կամուրջշին» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագրի օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման (բանկային երաշխիքների տեսքով) ապահովումները:

x. Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը ներկայացված պայմանագիրը և բանկային երաշխիքները հետ է վերադարձրել ուղղման, քանի որ ներկայացված բանկային երաշխիքների վերջնաժամկետը չի համապատասխանել հրավերի պահանջներին՝ /ապահովումները պետք է վավեր լինեն 90-րդ աշխատանքային օրը/:

xi. Հանձնաժողովի 22.02.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Կամուրջշին» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ և համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը, գնահատող հանձնաժողովը որոշել է «Կամուրջշին» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Երվադա» ՍՊԸ-ին, հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

xii. Պատվիրատուի 12.03.2021թ.-ի թիվ 61/5426 գրության համաձայն՝ «Կամուրջշին» ՓԲԸ-ն 12.02.2021թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն է ներկայացրել «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով իր կողմից

հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքները: Հաշվի առնելով, որ ներկայացված բանկային երաշխիքներում առկա է եղել անհամապատասխանություն՝ երաշխիքների վավերականության ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, երաշխիքները գրությամբ վերադարձվել են մասնակցին շտկման:

xiii. Նույն գրությամբ Պատվիրատուն հավելել է նաև, որ շտկված բանկային երաշխիքները պետք է ներկայացվեր մինչև 15.02.2021թ.-ը, մինչդեռ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն թիվ 1000-02 և 1001-02 բանկային երաշխիքների երկարացման մասին գրությունը ընկերությանը տրամադրել է 19.02.2021թ.-ին և նշված գրությունը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն է մուտքագրվել 19.02.2021թ.-ին՝ խախտելով երաշխիքների ներկայացման վերջնաժամկետը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3195-2021 գրությամբ «Կամուրջշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Երևանի քաղաքապետարանի կողմից կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 6-ով՝ ծառայությունների մատուցման գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 7.15-րդ կետի համաձայն՝

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.06.2020թ.-ի թիվ 154-Ա բաց մրցույթի մասին հայտարարության օրինակելի ձևը հաստատելու մասին հրամանի հավելված 9-ով սահմանվել է, որ եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Վերոնշյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան

համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը (Մասնակիցը) համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ

իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականություն-ները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրած «Կամուրջշին» ՓԲԸ-ն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ին Ընկերությանը ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Կամուրջշին» ՓԲԸ-ն: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ ներկայացվում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3»» կնքվելիք պայմանագրի նախագիծը, որը կարող է կնքվել հրավերով սահմանված

ձևով պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում, ինչպես նաև պայմանագրի գնի հարյուր տոկոսի չափով որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում: Պայմանագրի և որակի ապահովումները ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Պայմանագրի որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին: Պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է, որ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան պետք է ներկայացվի վերջինիս կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և վերը նշված ապահովումները, ինչպես նաև armeps.am տիրույթում անհրաժեշտ է ընդունել պայմանագրի շնորհումը, նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովի 12.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ընդունել է ի գիտություն, որ «Կամուրջշին» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագրի օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման (բանկային երաշխիքների տեսքով) ապահովումները:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը ներկայացված պայմանագիրը և բանկային երաշխիքները հետ է վերադարձրել ուղղման, քանի որ ներկայացված բանկային երաշխիքների վերջնաժամկետը չի համապատասխանել հրավերի պահանջներին՝ /ապահովումները պետք է վավեր լինեն 90-րդ աշխատանքային օրը/:

Հանձնաժողովի 22.02.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Կամուրջշին» ՓԲԸ-ի կողմից բանկային երաշխիքների ուղղումը ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ և համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը, գնահատող հանձնաժողովը որոշել է «Կամուրջշին» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Երվադա» ՍՊԸ-ին, հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Պատվիրատուի 12.03.2021թ.-ի թիվ 61/5426 գրության համաձայն՝ «Կամուրջշին» ՓԲԸ-ն 12.02.2021թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն է ներկայացրել «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով իր կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքները: Հաշվի առնելով, որ ներկայացված բանկային երաշխիքներում առկա է եղել անհամապատասխանություն՝ երաշխիքների վավերականության ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, երաշխիքները գրությամբ վերադարձվել են մասնակցին շտկման:

Նույն գրությամբ Պատվիրատուն հավելել է նաև, որ շտկված բանկային երաշխիքները պետք է ներկայացվեր մինչև 15.02.2021թ.-ը, մինչդեռ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն թիվ 1000-02 և 1001-02 բանկային երաշխիքների երկարացման մասին գրությունը ընկերությանը տրամադրել է 19.02.2021թ.-ին և նշված գրությունը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն է մուտքագրվել 19.02.2021թ.-ին՝ խախտելով երաշխիքների ներկայացման վերջնաժամկետը:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ին Ընկերությանը ուղարկված ծանուցմամբ, վերջինիս տրված տասն աշխատանքային օրյա ժամկետը չի բխել Կարգի 18-րդ կետի և Հրավերի անբաժանելի մասը կազմող Պայմանագրի 7.15-րդ կետի դրույթներից, քանի որ մրցույթը հայտարարվել և կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որպիսի պայմաններում Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը պետք է տրամադրվեր ոչ թե 10, այլ ծանուցումը և պայմանագրի և համաձայնագրի նախագծերը ստանալու օրվանից հաշված 15 աշխատանքային օրյա ժամկետ՝ հիմք ընդունելով Կարգի 18-րդ կետի և Հրավերի անբաժանելի մասը կազմող Պայմանագրի 7.15-րդ կետի դրույթները:

Հարկ է նկատել, որ վերոնշյալ դրույթների պահպանման արդյունքում Ընկերության կողմից 19.02.2021թ.-ին ներկայացված բանկային երաշխիքները կհամարվեին ժամկետում

հանձնված, քանի որ ծանուցումը ստանալու պահից՝ սույն թվականի փետրվարի մեկից հաշված 15 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվում է 19.02.2021թ.-ին:

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ, նման պայմաններում, եթե առկա է Կարգի 18-րդ կետի դրույթների խախտում, ապա դրանից բխող ցանկացած գործողություն, ինքնաբերաբար դառնում է անհիմն կամ խախտմամբ կատարված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն

իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի թիվ 1000-02 և 1001-02 բանկային երաշխիքների երկարացման մասին գրությունները, Հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.02.2021թ.-ին Ընկերությանը ուղարկված ծանուցումը, Պատվիրատուի 12.03.2021թ.-ի թիվ 61/5426 գրությունն ու Երևանի քաղաքապետարանի կողմից կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-21/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Կամուրջշին» ՓԲԸ-ն ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ ուղղված պայմանագրի ու որակավորման երաշխիքները ժամանակին ներկայացնելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (Հանձնաժողովի կողմից Կարգի 18-րդ ու Հրավերի անբաժանելի մասը կազմող Պայմանագրի 7.15-րդ կետերով սահմանված պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3195-2021 գրությամբ «Կամուրջշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/63 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**